ՀՊՏՀ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի շնորհավորական խոսքը՝ ՀՊՏՀ գրադարանավարներին

ՀՊՏՀ գրադարանի հարգելի աշխատակիցներ, գրադարանավարներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեր մասնագիտական տոնը ու ցանկանում եմ հավաստիացնել, որ յուրաքանչյուր մարդու կյանքում դուք կարևոր դերակատարում ունեք, և չկա մեկը, որ գրաճանաչ ու ընթերցող դառնալուց հետո սիրով չհիշի իր առաջին ուսուցչին, առաջին գեղարվեստական գիրքը, առաջին գրադարանավարին:

Դուք ձեր բարձր առաքելությամբ անջնջելի հետք եք թողնում մարդու կյանքում՝ աջակցությամբ, խորհուրդներով կապելով նրան գրքի հոգևոր աշխարհին, որում թագավորում ու հաղթանակում են գիտելիքը, լույսն ու բարին:

Օրեցօր վերակառուցվող ու արդիականացվող մեր համալսարանի գրադարանն իր ուրույն ճանապարհն է անցնում՝ համաքայլ ժամանակի պահանջին, և ձեր կոլեկտիվի անդամները այդ զարգացման ճանապարհին լավագույնս են կատարում իրենց գործը:

Կրկին շնորհավորելով ձեր տոնը, շնորհակալություն եմ հայտնում ձեզ անխոնջ ու նվիրված աշխատանքի համար, յուրաքանչյուրիդ մաղթում եմ անձնական բարօրություն, աշխատանքային հաջողություններ:

Հարգանքով՝
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր
ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ